


## Վրաստանում այլևս HTB+ չեն նայում

Հունիս 16, 2011

Վրաստանում այլևս HTB+ չեն նայում

 [ntv\\_logo\\_new.jpg](#) [1]

Համաձայն Վրաստանի հեռահաղորդակցությունների ազգային հանձնաժողովի հունիսի 10-ի հրամանի՝ Վրաստանում գործող բոլոր կաբելային հեռուստաընկերությունները, որոնց թիվը հասնում է 90-ի, պարտավոր են դադարեցնել «HTB+ премьера», «HTB+ кино клуб» և «HTB+ кино хит» հեռուստաալիքների հեռարձակումները:

Ըստ նույն հրամանի՝ հեռուստաընկերությունները պետք է հանձնաժողովին ներկայացնեն փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս հեռարձակումը Վրաստանի տարածքում:

Հրամանը հիմնված է Super TV կաբելային հեռուստաընկերության դիմումի վրա: Վերջինս մեղադրում է մրցակիցներին ոռուսական ալիքների ապօրինի հեռարձակման մեջ: Super TV-ն, որը վրացական շուկա է մտել 2011 թվականի հունվարին, առաջարկում է 40-ից ավելի ալիքներ՝ բացառությամբ «HTB+» փաթեթի, քանի որ նման թույլատվություն չունի:

Silknet ընկերությունը, որի SILK TV ինտերակտիվ հեռուստաալիքն ունի շուրջ 14 000 բաժանորդ, արդեն փոխարինել է «HTB+»-ը հեռուստադիտողների ցանկությամբ ցուցադրվող ֆիլմերով:

**Աղբյուր:** [Media.ge](#) [2]

### Թեմատիկ նյութեր

[Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեր որպես սեփական հայեցողություն. ոչ թե իրավունքի սահմանափակում»](#) [3]

[2012 թվականի ընթացքում ԼՀԱ-ի իրականացրած հետազոտությունները](#) [4]

[ԼՀԱ-ի ծրագրող One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում](#) [5]

[Ditaket.am: Հաշմանդամ աղքատ երազանքն իրականություն դարձավ](#) [6]

[Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն](#) [7]

**Source URL:** <http://www.jnews.am/node/1314>

#### Links:

[1] [http://www.jnews.am/files/ntv\\_logo\\_new.jpg](http://www.jnews.am/files/ntv_logo_new.jpg)

[2] <http://www.media.ge/en/node/41473>

[3] <http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan>

[4] <http://www.jnews.am/jff-studies-2012>

[5] <http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award>

[6] <http://www.jnews.am/mane-asryan>

[7] <http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek>